

խոստանալով եղբորմեն ապստամբիլ եւ բաժնել իրեն հետ երկիրը: Իսկ սա երբ պատգամաւորն այս լուրը բերաւ, հեգնութեան դառն ծիծաղով այսպէս պատասխանեց. «Գնա՛՛ գրուցէ քու տիրոջդ, որ ես իմ ազգիս արիւնը չի թափելու համար ամէն բան կը թողում կ'երթամ օտարութիւն, եւ կը գարմանամ թէ նա, որ եղբորը եւ եղբորորդուն դաւաճան լինելու չամաչէր՝ ինչպէ՞ս կը համարձակի ինձ բարեկամական դաշինք առաջարկել»:

Այս խօսքերը զրուցելէն վերջ, լի դառնութեամբ հեծաւ ձին եւ քանի մը ձիաւոր միայն հետն առած ուղեւորեցաւ եւ հասաւ Կարին, ուր իր համբաւը իրմէ առաջ հասել էր, եւ ուր Միքայել յունաց Կայսրը զինք կը հրաւիրէր գալ Կոստանդնուպոլիս. բայց հայրենեաց հողը, եւ սիրտ մը, որ ինք միշտ կը հավտար թէ իրեն էր, այդ հրաւերն ընդունիլ կ'արգիլէին, եւ խորհրդածելով կը դանդաղէր: Այս վիճակին մէջ ծանր հիւանդութեամբ հիւանդացաւ Կարին եւ բժիշկները՝ երբ առողջութիւն գտաւ եւ դեռ տկայ էր հրամայեցին օդափոխութիւն Կարնոյ շրջակայքը Մանանաղեաց գաւառի երկիրը: Փոքրիկ ամառանոց մը բլրակի վրայ յունաց սահմանագլուխը Կարնոյ զօրավարին ընտրութեամբ եւ խորհրդով իւր բնակութեան տեղին էր. վտակի մը եզրը եւ քանի մը դարաւոր կաղնիք իրենց ստուերներով իւր հանգստեան տեղն էին: Այդ հզօր բնութիւնը հազիւ սկսէր էր կազդուրիլ, երբ յանկարծ առտու մը խումբ մը տաճիկ հեծելազօր շրջապատեցին զինք, կապեցին, հեծուցին ձիու մը վրայ եւ տարին առ Աշոտ Բագրատունի: Յունական մատն եւ արաբական ձեռք պատրաստել էին այս դաւաճանութիւնը:

Աշոտ արդէն շատ վտանգաւոր դիրքի մէջ էր այն օրերը. ազատել զգուրգէն վախցաւ ամիրապետեն, վասնզի իր անձին դէմ նաեւ շատ ամբաստանութիւնք կային եւ հայրը Սպարապետը Բաղդատ կալանաւոր բարբարոսաց ժանիքներու մէջ կը հեծէր. ուստի լաւ համարեց Տփիսիսի քաղաքապետին յուղարկել Գուրգէն, որ ամենէն մարդասէր կը համարուէր շրջակայ ամիրայից մէջ: Բայց սա նաեւ երբ շատ ջանաց սպառնալեօք եւ ողոթանոթ մահմեդականութեան բերել զնայ եւ օգուտ չի տեսաւ, կրկին կապանոք եւ վիզը շղթայներ